



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ-225-Ա

քաղ. Երևան

«ՀՈՎԱՐՂ ԿԱՐԱԳՑՈՉՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑ-  
ՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ  
ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համա-  
կարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների  
նախարարության 2014 թվականի փետրվարի 18-ի N 1/3.8-2/2269-14, Հայաստանի Հանրա-  
պետության արդարադատության նախարարության 2014 թվականի փետրվարի 19-ի N 02/  
995-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվա-  
կանի փետրվարի 13-ի N ԴԴ/22/1251-14, Հայաստանի Հանրապետության կառավարության  
առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի փետրվարի 13-ի N ՎՄ/3-4/1662-  
14, եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակել «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հա-  
սարակական կազմակերպության (ՀՀ, քաղ. Երևան, Նորքի այգիներ, 180, ՀՎՀՀ՝ 01533153)  
կողմից իրականացվող՝ 35,186,130 դրամ ընդհանուր արժեքով «Պարբերական հիվանդու-  
թյամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործա-կան  
ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատա-  
կով «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպու-  
թյան կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է նշված ծրագրի  
իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մոդուս Իմէքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00874298) 2014 թվականի հունվարի 29-ին  
կնքված՝ N 05/2014 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Կոլխիցին» 1մգ  
դեղորայքի մատակարարում՝ 35,186,130 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակեր-  
պությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաս-  
տանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման  
հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ